

ՕՇՈՒՄԱՐ



Զարարար
Դրին ԿԿ

Զեվոն

Գ. Տարի, Թիւ 11, Նոյեմբեր 1, 1929

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՇՈՅ ԽՕՎԱՌ ԸՆԹԵՐՑ ԸՆԿ-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Դրկել 923 N. Leavitt St., Chicago, Ill.

ՀԻՆԻՆ ՏԵՂ ՆԱՐԻ

«Ծօվառ»ի այս թիւով կը հրատարակենք պայմանագիրը՝ կայացած Զնդուչի Վերը. Միութեան եւ Հ. Բ. Բ. Միութեան միջեւ, ի մասին նուպարացնի մէջ նոր Զնդուչ անուն թաղամասի մը շինութեան:

Պայմանագրին տրամադրութեանց համաձայն, Զնդուչի Վերը. Միութեանը մէկ քանի մասնավճարուով եւ մինչեւ 1931, Ապրիլ, Հ. Բ. Բ. Միութեան պիտի վճարէ 6,250 տուլար: Այս գումարով հինգ տուներ պիտի շինուին նուպարացնի «Նոր Զնդուչ» անուն թաղամասին մէջ:

Պայմանագրութիւնը, իր բոլոր տրամադրութիւններով, լաւագոյնն է որ կրնար մերինին նման փոքր եւ նիւթական միջոցներէ զուրկ Միութիւն մը ձեռք բերել, եւ ուստի ծափահարելի է հայրենացնութեան ողին, որ կը ցուցադրուի Հ. Բ. Բ. Միութեան կողմէ եւ փութաջանութիւնը՝ որով մեր Միութեան Կեղը. Վարչութիւնը կատարած է վերջին Պատգ. Փողովին կողմէ իրեն վատահուած ամենական գործը:

Հարկ է անմիջապէս եւ բացարձակ անկեղծութեամբ ըսել թէ, ձեռնարկը չատ համեստ է եւ մենք հարիւր առ հարիւր վատահութեամբ կրնանք յայտարել թէ փութով յաջողութեամբ պիտի պըսակուի:

Եւ ինչո՞ւ չէ: Զնդուչին իր հայրենիքին համար, երբ վատանգի մէջ էր ան, կոռւցաւ ողի ի բըսին եւ անվեհերութեամբ, զոհեց իր կետնքը, թափեց իր արիւնը, եւ ցուցադրեց հերոսական քաջութիւն ու աննուած դիմադրականութիւն:

Զնդուչին ո՛չ միայն կոռւած ու զոհած է իր սեփական օճախին ու հայրենի գիւղին պաշտպանութեան համար, այլ իր լաւագոյն ծառայութիւնները տրամադրած է ազգային ամէն շարժումներու: Բոլոր կազմակերպութիւններէ ներս ունեցած է եւ ունի արժանաւոր ներկայացուցչութիւն, որուն չնորհիւ արժանացած է յարգանքի ու ներբողի զինքը եւ իր իսկական էութիւնը ճանչողներուն կողմէ:

Եւ այսօր երբ խնդիրը իր աւերուած ծննդավայրը վերաշնելուն շուրջ է, երբ հին Զնդուչի յաւերժացումն է հարցին առանցքը, երբ շինելու, քար քարի վրայ դնելու հրաւէրն է որ կ'ուղղուի իրեն, հարկաւ պիտի զոհէ, հարկաւ պիտի ընէ իր կարելին, հարկաւ նիւթական եւ բարոյական ամէն զոհնութեան յանձնառու պիտի ըլլայ եւ պիտի կերտէ իր գիւղը Հայուն վերածնող հայրենիքին մէջ:

Զնդուչին, առաջին կոռւելու եւ զոհաբերելու մէջ, պիտի ըլլայ առաջին եւ վերաշնելու ու ծաղկեցնելու սրբազն աշխատանքին մէջ:

Եւ արդէն, այժմ քաջութեան եւ հայրենասիրութեան չափանիշը փոխուած է, աւելի ճիշտր՝ անոնք այժմ շատ աւելի ճշգրտութէն կ'ըմբռնուին հայ հասարակութեան կողմէ:

Իսկական քաջութիւնը իրողութիւններու շեշտակի նայիլը եւ զանոնք իրենց լման չափով գնահատելն է: Օդին մէջ մէկ երկու հրազէն պարպելով քաջութիւն ծախելու եւ պոռոտ ու «յեղափոխական» երգեր երգելով քաջութիւն ցուցադրելու ժամանակները եւ պարագաները անցած են վաղուց: Նոյնպէս, այժմ հայրենասիրութիւնը կը կայսար վերաշնուրութեան մէջ, եւ իսկական հայրենասէրը օդին դէմ կոկորդ պայթեցնողը չէ, այլ ան որ կը

զոհէ, ան որ կը փորէ, կը հերկէ հողը, կը կոփէ քարը, կը մշակէ երկիրը, վազող ջուրերէն ելեքտրական ոյժ եւ լոյս յառաջ կը բերէ եւ այս ամէնը կը ծառայեցնէ հայրենիքի զարդացման ու յառաջդիմութեան:

Ուրեմն «Նոր Զնդուց»ի վերաշինութիւնը գործ մըն է որ պէտք է խօսի ամէն հոդիի եւ արժանանայ բոլոր հայրենակիցներու սրտագին աջակցութեան:

Եւ որքան չուտ կատարուի մեզմէ սպասուածը, այնքան լաւ: Սպասելու հարկ չկայ: Ոչ ալ հարկ կայ ծանր խորհուրդի եւ մտահոգութեան: Ուզուածը եւ ակնկալուածը վոքր նուէր մըն է, ինչ որ կարելի է տալ եւ ինչ որ հոդին կը գոդէ ներսէն:

Մօտ են արդէն Ծնունդի եւ նոր Տարւոյ օրերը: Լաւագոյն առիթն է այս մեր շատ մը նուէրներու շարքին բաժին մըն ալ հանել «Նոր Զնդուց»ի համար: Եւ այս մէկը պիտի ըլլայ, տպահովաբար, նպաստակին յարմարագոյնս ծառայող նուէրներէն մէկը:

Նուիրատուներու առաջին ցանկը պիտի հրատարակուի «Ծօվառ»ի յաջորդ թիւով: Ո՞վ պիտի չուզէր որ առաջին առիթով իսկ իր անունը երեւնար այդ ցանկին մէջ:

Ահա արշաւը կը սկսի...: Հարկա՛ւ Զնդուցցի հայրենակիցներ պիտի վազեն հեւ ի հեւ հասնելու իրենց կէտ նպատակին, որ է հինին տեղ նորին վերականգնումը հայրենիքի գեղածիծաղ երկինքին տակ:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հնդ մէջ

Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Շքան. Յանձնաժողովին եւ

Զնգուշի վերաշինաց Միութեան կեդր. Վարչութեան.

Յօդ. Ա.- Հ. Բ. Բ. Միութիւնը յանձն կ'առնէ Նուպարաշէնի մէջ կառուցանել առ նուազն իհնգ բնակարանէ բաղկացած քաղամա մը, նոր Զնգուշ անունով: Զնգուշի վերաշինաց Միութիւնը իրաւունք պիտի ունենայ նոր տուներ շինելու այս քաղամասին մէջ, երբ հարկը պահանջէ:

Յօդ. Բ.- Զնգուշի վերաշինաց Միութեան կեդր. Վարչութիւնը յանձն կ'առնէ Հ. Բ. Բ. Միութեան Շք. Յանձնաժողովին վերաբերել 6,250 տոլար, բուլականէս սկսեալ վեց հաւասար մասնաքածիններով, երեք ամիսը մէկ, մինչեւ Ապրիլ 15, 1931:

Յօդ. Գ.- Նոր Զնգուշ քաղամասին բնակարանները պիտի յատկացուին նախընտրաբար Զնգուշի գաղքականներու, որ իհմա կը գտնուին Սուրբիա, Յունաստան եւ Ֆրանս:

Յօդ. Դ.- Երեք որեւէ պատճառով նոր Զնգուշ քաղամասը իհմնել անկարելի ըլլայ, Հ. Բ. Բ. Միութեան Շք. Յանձնաժողովը կը պարտի իր ստացած գումարը տոկոսվը վերադարձնել Զնգուշի վերջ. Միութեան:

Յօդ. Ե.- Այս Պայմանագիրը երկու օրինակ պիտի ստորագրուի երկու կազմակերպութեանց պաշտօնական Մարմիններուն կողմէ:

Յօդ. Զ.- Պայմանագրին ստորագրուած օրը Զնգուշի վեհաց Միութիւնը Շք. Յանձնաժողովին պնարէ ստացին մասնաքածինը \$1,041.70:

Ի Դիմաց Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Շք. Յանձնաժողովին Նիւ Եորք, Հոկտեմբեր 5, 1929

ԾԱՆՈԹ. — Զնդուցի վերջ. Միութեան կեդր. Վարչութեան կողմէ ստորագրուած այս Պայմանագրին օրին կը մնայ Հ. Բ. Բ. Մ. Միութեան Շք. Յանձնաժողովին մօն:

ԱՀԱՌ ՍՊԱՍՈՒԱԾ ԳՈՐԾԸ

«Ծօվառ»ի նախորդ թիւերէն մէկուն մէջ, մէր հանակիցներէն մին կը վախաքէր որ Զնդուցի վերաշինաց ութեանը առաջինը ըլլայ Նուպարաշէնի մէջ թաղամա շնելու գործին մէջ:

Ուրախ եւ հոգարտ ենք ըսելու որ Զնդուցի վերաշինաց առաջին Միութիւնն է որ կը պայմանաւորուի Հ. Բ. Բ. Մ. ութեան հետ Նուպարաշէնի մէջ «Նոր Զնդուց» անուն զամաս մը շնելու համար:

Թէ՛ ուրիշ հայրենական միութիւններ եւս պիտի ներկան մեր օրինակին, շատ հաւանական է. այս ուղիթեամբ Հայ Բարեգործական Միութեան Ամերիկայի կերպութարարութեան կողմէ դիմում եղած է բոլոր հանական միութեանց նոյ. 17ին ընդհ. Խորհրդակցուղով մը գումարելու, ուր ներկայ պիտի ըլլանը հայրենական եւ այլ միութեանց ներկայացուցիչ Մենք առաջինը պիտի ըլլանք:

Ասկից երկու շարաթ առաջ, եթէ Զնդուցիներ դանուի բարեկործականի նիւ Եորքի հրապարակային ժողովին վատահ եմ թէ բոլորն ալ հուպատութեամբ դուրս պիտի էին որահէն:

Մրակը լեցուած էր ծայրէ ի ծայր. ատենախօսութիւնը եւ գեղարուեմական մասը լրանալէ յետոյ, երբ Հրաչ Երսաննդ հանգանակութիւնը լրացաւ, առաջին անդ կարդաց Զնդուցի վերջ. Միութեան կեդր. Վարչութիւնը մասմակը՝ որով կը յայոնուէր Զնդուցի վերջ. Միութեան որոշումը՝ Նուպարաշէնի մէջ հինդ տուն շնելու մար 6,250 տոլար յատկացնել Բարեգործականի 1. տոլար կանխալճարով: Ժողովուրդը ոտքի կեցած երկար տեւ ծափահարեց Զնդուցիներու առած այս քայլը: Հասարցուցին թէ որո՞նք են այս Զնդուցիները: Պրն. Հ. Երուանդ, որ լաւ կը ճանչնայ մէջ, գեղեցկօրէն բացատրէ:

Կեդր. Վարչութիւնը որոշած է ուեէ ջանք չխնայի հասնի իւրաքանչւր Զնդուցիի եւ ապահովէ անոր օժանդակութիւնը սկսուած ձեռնարկին: Ուստի պահենք մեր առնութեանը ապահովութեանը եւ աշխատիւր եւ աշխատիւր ամամակէն շատ առաջապես ապահովէ այս 6000 տոլարը եւ յանձնել Բարեգործականի 0'ն ի գործ, Զնդուցիներ:

Ա. ՓԱՊՈՒԵՃ:

Նիւ Եորք

ՃՆՈՐՀԱԿԱՍԼՈՒԹԻՒՆ

Մեր խորին չնորհակալութիւնը կը յայոնենք բոլոր մեր հայութիւններուն, որ իրենց ներկայութեամբ ու ծաղկական ամեններով յարգեցին մեր մօր Սովոր Մամային գաղքալը: ՄԱՐՏԻՐՈՍ Պէսոնի եւ ԵՂԲԱՅՐ

ԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՁ ՄԸ

Պէյրութէն «Բարեկամ մը» ստորագրող «Ծօվառ»ի թղթակիցը, ողբացեալ Բրօֆ. Յովհ. Պուճիզանեանի հարադատներուն դպրոցական շրջանի յաջողաւոյն աւարտման նկարագրութիւնը ընելու առիթով, իր խօսքը ուղղած էր Պուճիզանեան եղբարց, որպէս զի մօտենան Զնդուցիներուն և գործեն անոնց հետ եւ անոնց համար:

Դաղափարը, որ յղացած էր յարգելի թղթակիցը, իսկապէս գնահատելի է: Սակայն կ'արժէ զայն ուղղել աւելի լայն շրջանակի մը, այսինքն բոլոր Զնդուցի մասաւորականներու, որոնք կը գտնուեն Ամերիկայի մէջ:

Արհամարհելի թիւ մը չեն կազմեր անոնք. սակայն դժբախտութիւնը այն է որ անոնք միշտ հեռու մնացած են (բացառութիւնները յարգելով) մեր հայրենակցական գործերէն եւ հայրենակիցներուն հետ շիտում ունենալէ:

Թերեւս պատճառը այն է որ մեղմէ շատեր անուս են, եւ հետեւաբար՝ ըլլայ դաղափարական տեսակէտով կամ վարք ու բարքով՝ միևնոյն մակարդակին վրայ չեն դտնուիր, ինչ որ մասամբ ճիշտ է սակայն ասիկա չօշափելի փաստ մը չէ, որպէս զի բոլորովին հեռու մնան եւ ամէն ինչ բախտին ձըդնեն:

Ուստի մեր մտաւորականներուն այս անտարեր կիցուածքը արդարանալի չէ, այլ մեղանչում մըն է իրենց կուտին հանդէպ, որովհետեւ այն դաստիարակութիւնը որ իրենք ունին, պարտականութիւն կը գնէ իրենց ուսին վրայ, մտնել ժողովուրդի հասարակ խաւերուն մէջ եւ զանոնք առնորդել զէպի լաւն ու շիտակը:

Դժբախտաբար մինչեւ հիմա այդպիսի փորձ մը չէ եղած իրենց կողմէ, եւ ասպարէզը մնացած է պատեհապաշտներու ճեռքը, որոնք իրենց ուղածին պէս վարած են մեր գործերը, եւ միշտ դործը տուժած է. սակայն խնդիրը այլ կերպ պիտի ըլլար, եթէ իրենք քիչ մը հետաքրքրութիւն ցոյց տուած ըլլային:

Այսու հանդերձ՝ ուշ չէ դեռ, այսօր նոյնքան պէտք ունինք իրենց՝ վաղուան դործերը իրականացնելու համար, եւ պարտականութեան մեծ բաժին կը ծանրանայ մեր պատկանելի ծերանիին՝ Գոչո Ամուլին զաւակաց՝ Պուճիզանեան նղրարց վրայ, որպէս զի իրենց շուրջ հաւաքին Զնդուցի մտաւորականութիւնը՝ քչիկ մը բաժին հանելու իրենց կարողութիւնն եւ փորձառութիւնն, ի նորաստ մեր հայրենակցական գործերուն:

Այս կը պահանջէ Զնդուցին իրենցմէ, եւ արդարացի է այս պահանջը:

ԾՕՎԱՌՑԻ

ՓՈՒԹԱՑՈՒԻՐ ՆՈՒԷՐԻ

Բացուած է նուիրատուութիւնը ինպաստ «Նոր Զնդուցի» շինութեան: Առանց սպասելու եւ առասպանութեամբ փութացուր նուէրդ Կեդր. Վարչութեան ատենապետ Պրն. Պետրոս Ստեփանեանի հասցեին՝ 6830 Myrtle Ave., Brooklyn, N. Y. :

Զնդուցի Վերաշինաց Միութեան անդամներ եւ ոչ-անդամներ հաւասարապէս պէտք է մասնակցին այս նուիրատուութեան, որովհետեւ Նոր Զնդուցը պիտի ըլլայ ամենուը:

ԱՐԾԻՒԾ ՏԵՐ ՄՆԱՑ ԻՐ ԲՈՅՆԻՆ

Զնդուցիներու զէնքի սիրահարութեան շրջանն էր, երբ Պ. Եւ Յ. Եղնիկ որսալու համար՝ Վանքուք, Սեւքար եւ Եփրատի եղերքը երկու զիշեր թափառելէ յետոյ, երբորդ օրը Վերի Մահլայի նախիրը արածող թուրք հովիւին հետ լուր զրկած էին մեղի որ աւտուն կանուլու երկու հաստատուն պարան եւ լաստեր մը տանինք իրենց՝ Վանքուք՝ Տէր Ադամի (*) վերելմանին մօտերը:

Յաջորդ առաւօտ Մ. Գ.ի հետ երկու պարան եւ լաստերը տարինք ժամադրուած վայրը, ուրկէ զէպի Զնդուց դարլով հասանք տուտանի մը մօտ: Հոս երկու պարանները ամուր մը իրարու կապեցինք. մէկ ծայրը Պ.ին մէջքին կապեցինք, իսկ վառ լապտերը կախեցինք կուրծքէն ու ատըրածանակն ալ ձեռքին՝ հորին մէջ կախելով վար իջնուցինք զինքը: Պարանը հասնելու մօտ էր, երբ վարէն կանչեց թէ յատակը հասած էր: Քառորդ ժամ յատակի այլեւայլ մասերը խուզարկելէ յետոյ, վեր քաշեցինք զինքը, առանց դտնելու Պ.ի եւ Յ.ի փնտածը:

Ատկէ քալեցինք Մուրատիկա ձորին դլուխը, ուր մէկլզ-մէկու օգնելով ժայռերու բացուածքներէն վար իջանք եւ հասանք Օտուն Գուլի դիմացի սպառն: Հոս Պ. Եւ Յ. ինք-զինքնին տեղաւորեցին արծիւի մը բոյնին դիմաց: Մեզէ հաղիւ հրացանաձիդ մը հեռու արծիւն իր դլուխը վեր բոնած մեր շարժումները կը գիտէր: Պ. Եւ Յ. միազարկ արձակեցին իրենց զնդակները, որոնց փոշին արծիւին բոյնին շուրջ թուզուց իր հետքը, իսկ արծիւը օդանաւի մեծութեամբ իր թեւերը բայցած սկսաւ սաւառնիլ մեր դլխուն վերեւ: Պ. Եւ Յ. հրացանները կրկին լեցուցին. արծիւը քառորդ ժամէն դարձաւ իր բոյնը, որ անմատչելի ժայռի մը կրծքին վրայ զետեղուած էր: Թոչուններու այս թագաւորը հազիւ թեւերը վար բերած կը տեղաւորուէր, երբ զոյդ մը զնդակներ նորէն Փշալով խանդարեցին արծիւին հանդիսատը, որ կրկին լայն բացաւ թեւերը՝ սաւառնելու անհուն պարապին մէջ:

Պ. Եւ Յ. խորհեցն այս Ծօվասի արծիւին վրայ կրակել առանձինն, մին նստած պահուն, իսկ միւսը թոխչքի ատեն:

Արծիւը կը շարունակէր իր շրջանակաւոր թոխչքը առանց մեր տեսազութենէն հեռանալու. 20-23 վայրիկան յետոյ նորէն վերադարձաւ իր բոյնը, եւ մեր որսորդներու առանձինն կրակելու նոր խորհուրդն ալ ի դերեւ հանեց, քանի որ օդին մէջ կը տեսնէինք զինքը՝ աղատ՝ հալածող զնդակներէն:

Արծիւը կրկին վերադարձաւ եւ առանձին նշանառութիւնը կրկին փորձուեցաւ ապարդիւն: Սակայն ան այս անդամ իր թոխչքը բաւական հեռացուց, գնաց Զաթալզակայի եւ Ծօվասի միջեւ բացուած անդամախոր ձորին վրայ եւ սկսաւ թոչիլ շրջանակախոր պատուաքով մը, այնպէս որ կը տեսնէինք իր սպիտակախառն մարմնոյն փարմիլումը արեւուն ճամանէներուն տակ: Ժամէն աւելի տեւող այս թոխչքէն յունած՝ արծիւը նորէն իր բոյնը դարձաւ, եւ զնդակները նորէն սուլեցին, արծիւը կրկին բարձրացաւ օդին մէջ եւ այս անդամ ուղղակի մեր վրայ շրջիլ սկսաւ: Պ. Եւ Յ. սրտնեղած իրենց անյաջողութենէն՝ սկսան օդին մէջ պարզել զնդակները, արծիւը սակայն թափ ու ծափ տալով իր թեւերուն կարծես մեղ կը ծաղրէր վերէն: Պ. Եւ Յ. յամառեցան, յամառեցաւ նաեւ արծիւը ու չուղեց զէթ քիչ մը հանգստի համար իր տեղը փոխել:

(*) Յարմար առիքով մը կը խօսինք Տէր Ադամի մասին:

Օրը իրիկուն եղաւ, սակայն կոփել շարունակուեցաւ անզէն արծիւին ու մեր որսորդներուն միջեւ: Պ. եւ Յ. ճարահատ խորհեցան թէ այս արծիւը անպատճառ ձագեր ունի իր բոյնին մէջ, որ այսքան նեղութիւններէ յետոյ ալ չէր ուղեր հետանալ բոյնին, ուրեմն վերջին զնդակներն ալ պարագելով որոշեցին վերջ տալ կոփելն: Այս շատ ուշ մտածուած պատճառարանութիւնը կը նմանէր աղուէսի խաղողի չասնելուն, որովհետեւ արեւը մարը կը մտնէր եւ մութը շուտով վրայ պիտի հասնէր մեղ ձգելով դիրքի մը վրայ, ուրիշ հարկ էր վար իջնել լոյս աչքով: Ուստի մեր ոտքի փոշին թոթվելով ժամ առաջ ապահով վար իջանք լեռնին, իսկ ապատօրէն սաւառնող արծիւը ի վերջոյ վերադարձաւ իր անառիկ բոյնը եւ տէր մնաց անոր:

* * *

Այդ օրէն ի վեր արծիւը աղատատենչութեան եւ քաջութեան խորհրդանշանը եղած է ինձ համար եւ միշտ յարդանքով արտասանած եմ արծիւ անունը:

Մենք մեր բոյներէն հալածուելով լրեցինք դանոնք: Բայց ապահովաբար մեր հալածած արծիւները տակաւին տէր են իրենց բոյներուն: Օրինակ առնենք մեր Ծօվառի քաջ եւ անվեհեր արծիւներէն:

ՍԵՒԻՔԱՐ

ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒԻ ԿԵԱՆՔԻՆ

ՖԱՌԻԼԲՐ.— Հոկտեմբեր 15ին, 68 տարեկան հասակին մէջ մահկանացուն կնքեց Տիկ. Սողիկ Պէսօնան, որ բաւական ատենէ ի վեր յօդացաւի հիւանդութենէ կը տառապէք: Սողիկ Մաման երեսուն տարիէ ի վեր թրէզնո հաստատուած էր եւ իր ամուսնոյն մահէն յետոյ կ'ապրէր իր վեց զաւակներուն (Մարտիրոս, Պետրոս, Աւետիս, Քաջ, Ճորճ եւ Վահան) հետ, չըջաղատուած 11 թոռնիկներով:

Թաղման ախուր արարուութիւնը կատարուեցաւ Հոկտեմբեր 18ին, Վեր. Մանաւեանի ճեռամբ մարմինը ամփոփուեցաւ Ֆրէզնոյի Արարատ գերեզմանտան մէջ՝ իր ամուսնոյն քավ:

Սողիկ Մամային յուղարկաւորութեան կը մասնակցէին մեր բոլոր հայրենակիցները: Լոյս Անձևուն եկած էին Համբ Յակոբ Դողմազեան եւ որդին, Նաճարեան Մէլքոն՝ իր ընտանիքով:

Հայրենակիցներ եւ բարեկամներ ծաղկեպսակներով զարդարած էին Սողիկ Մամային զերեզմանը: Տիրոջը միփթարութիւնը կը ինդրէնք Պէսօնան եղայրեններուն ու աղղականներուն:

Կ. Ս. ՍԼՐԸՄԵԱՆ

ՇԻԲԱԿՈ.— Տէր եւ Տիկին Խորէն Տաղակիեան մանչ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Նոյնպէս, բաւական ժամանակ առաջ, մտնչ զաւակ մը ունեցան Տէր եւ Տիկ. Պազտասար Տաղտիկեան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք եւ աշքը կը լուսենք բոլոր աղղական բարեկամներուն:

*** Տէր եւ Տիկին Պ. Թէլլոյեանի զաւակներուն մկրտութիւնը տեղի ունեցաւ Հոկտ. 12ին, ճեռամբ Տէր. Պ. Քջնյ. Կիւլտալեանի եւ կը քահայրութեամբ Տէր եւ Տիկ. Յ. Ալբրէթեանի: Մեր խնդակցութիւնը:

*** Տիկին Ե. Կէօքճեան իր հիւանդութենէն բաւական մը առողջացած է: Կատարեալ ապաքինում կը մաղթենք:

*** Պրն. Դ. Կէօքճեան Հոկտ. 12ի դիւրը իր ինքնաշարժով տուն դաշտուն միջոցին, արկած մը ունեցած եւ գնասած է օտարական մը, որ դինով եղած է պատահարի ուահուն: Խնդիրը զատարան ինկած է: Կը յուսանք որ զատալարութիւնը կը վերջանայ ի նորաստ մեր հայրենակեցին:

*** Տէր եւ Տիկ. Պ. Կէօքճեան իրենց ինքնաշարժով քաղաքէս մէկնեցան զէպի Քաղաքօրնիս: Բարի ճանապարհ կը մաղթենք:

*** Տիկին Խ. Գույումմանեան ապաքինած է իր հիւանդութենէն: Խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Նիւ Եորքէն քաղաքս ժամանեց Պրն. Զնդուչեան: Բարի գալութիւնը:

*** Մեր համակերելի հայրենակիցները՝ Տէր եւ Տիկին Կ. Գույումման աղջիկ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

ՍէլլԱՌ.— Քօլումպս Տէյի օրը Հէրի Ս. Սէրեանի թոռան՝ Մակտութիւնը երկրորդ տարեկարգին առթիւ, աղդական բարեկամներ իր նուէրներով հաւաքուած էին Հէրիին բնակարանը՝ արեւշատութիւն մութելով փոքրիկ Անդրանիկին: Մասնաւոր մաղթանքներ եղան որ Անդր նիկ իր մեծ հօր՝ Հէրիին տեղը զաւակ ու այսպէսով զաւակար մէկը հաւանայ իր աղդակիցներուն:

Այդ օր Խ. Ս. Սըրմեան կը կը պաշտօնին կատարեալ զիստութիւնն ունեցաւ: Եւ Տիկի սովորութեամբ Հիւրասութիւնը ներկանել ֆրէտի եւ Մատղաշեան իրենց նուազով լաւ փայլ մը տուին օրուանին: Ներկաներ ուշ ատեն եւ գոհ տպաւորութեամբ մեկնեցան:

*** ՀԱԼԻՊ.՝ Տէր եւ Տիկին Ս. Խաչատուրեան աղջիկ զաւակ մը ունեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Տիկին Մարեան եւ իր աղջիկը՝ Օր. Ազնիկ՝ Հալէպէն Մար մեկնեցան: Բարի ճանապարհ եւ յաջողութիւնը կը մաղթենք:

*** Աէլէրակարանակ Գարա Օղան Օփօխն աղջիկը Սարա, որ մէջ զէտին ատեն մօրմէն խլուած ու տարագրուած էր քրտարանի զիւլ այժմ աղատուած է: Աչքը լոյս իր մօրը՝ Մարիամ Տալտըպանեանի Մարսէլ կը դանուի:

*** Օղոստ. 1ին տեղի ունեցաւ նշանախօսութիւնը Պրն. Ցարութարաբեանի (Չարսանճաղցի) ընդ Օր. Լուսիկ Շաշոյեանի: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

Ս. ՓՈՒԽՈՒ

ՎԱԼԱՆՆԱ.— Ֆիլատէլֆիա բնակլող հայրենակիցներէն Պրն. Պոռօնանի նշանախօսութիւնը ընդ Օր. Եղան Աւետիսեանի (Թուրութիւն տեղի ունեցաւ Վալանսի մէջ, Սեպտ. 3, Երեքարթի Երեկոյ, Տիկին մաթ Աւետիսեանի բնակարանին մէջ, ներկայութեամբ աղդականներու հայրենակիցներու: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք բոլոր պարագաներուն:

Սեպտ. Տիկ Պրն. Պետրոս Պոռօնան եւ Օր. Եղան Աւետիսեանի, ընդ բակցութեամբ Տիկին Գ. Աւետիսեանի, Մարսէլ մեկնեցան՝ ճամփութեան պատրաստութիւնները տեսնելու համար: Ցաղողութիւն:

*** Տէր եւ Տիկին Տէր Թաղէսուեան Սեպտ. 1ին մանչ զաւակ մը ունեցան: Աչքը լոյս բոլոր պարագաներուն:

*** Հայրենակիցուհի Տիկին Աննա եւ աղջիկը Օր. Թուրլանտա Բահուաններ միացան իրենց սիրելիններուն, կը յայտնենք մէր ջերմ գակցութիւնը:

ՑԱԿՈԲ ԹՈՒՐՈՒ

ՈՒՇԱՂՐՈՒԹԵԱՄԲ կարդայ Կեդր. Վարչութեան կողմէ հրատարակուած «Կոչ»ը եւ աշխատ ամէն հայրենակից իրազեկ ըլլայ անոր պարու նակութեան եւ հետաքրքրութիւն մէր հէր հայրենակցիւթիւնը: Ուշադիր եւ աղնիւ հետաքրքրութիւնը անշուշտ խթան մը պիտի ըլլայ գործի եւ զոհորդ թեան:

